ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 225-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 40-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 26-ի թիվ 3 նիստի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից՝ սոցիալական աջակցության նպատակով, թվով 39 քաղաքացիների հատկացնել 1430000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

27.08.2026

X

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639 **Վ.ԱՐՍԵՆՅԱՆ**

2026թ. օգոստոսի 27
ք. Եղեգնաձոր